


ՏԵՐԵՆ-ԽԱՐԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԱՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՇԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ի Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
» » վեցամսեայ » 50
Օտար կրկին հարկան հրաճ 25
» » վեցամսեայ » 14
Թղթաստի ծախքը խմբագրութեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԳԱՂԱՔԱԿԱՆՆԵՐԸ

Մինչ Աղեքսանդրիոյ մէջ Գաղթականաց
Յանձնաժողովը կը լուծուի՝ իր գործառնու-
թեանց շարունակումը յանձնելով Թաղական
Խորհուրդին, Գահիրէի Յանձնաժողովին ատե-
նապետն ալ հրաժարական կուտայ : Այս վեր-
ջին պարագան նոյնքան անակնկալ է որքան
ցաւայի : Հարկւրէ աւելի գաղթականներ կան
տակաւին Առաջնորդարանի շրջափակին մէջ,
անուագի և օգնութեան կարօտ, շատերն ըն-
տանիքով, որոնք կը սպասեն կամ իրենց տե-
ղերը դառնալու յարմարագոյն առիթին և
կամ գործով մը իրենց սպորտաւոր ճարելու
պատահականութեան : Մինչեւ այն ատեն,
խնամածու ձեռքերու կը կարօտին այդ տարա-
բաղձներ :

Գաղթականաց Յանձնաժողովը ըսելով, չի
հասկցուիր անշուշտ բազմաթիւ մարմին մը
որ աշխատութեան բաժանումով թեթեւցու-
ցած ըլլայ գործը ու ատենապետին հեռա-
ցումը չի խանգարէ զայն : Ընդհակառակն,
Ազիզ պէյ, ատենապետը, կեդրոնացումն էր
այդ մարմինին, իր և երկու-երեք պաշտօնակից-
ներով, որոնց անձնուէր գործունէութիւնն ալ
ամեն յարգանքի արժանի է : Ետքին մը հե-
տէ տարաւ այդ ծանր բեռը, ցերեկը գիշե-
րին խառնելով, իր անձէն զոհելով ու իր քը-
սակէն տուժելով իսկ : Գաղթականներուն մէջ-
տեղ՝ զինքը մօտէն տեսնողները պիտի վկայեն
թէ ճշմարիտ հայր մը եղաւ անոնց համար,
պարզ, անկեղծ ու բարի, անսպառ համբե-
րութեամբ մը լսելով գանգատներ, վէճեր,
գիմումներ, կրցածն ընելով ու շատ անգամ
չի կրցածն ալ փորձելով :

Իր հրաժարման լուրը ցաւ կը պատճառէ
մեզի, ո՛չ միայն անոր համար որ զգալի պա-
կաս մը պիտի թողու և Յանձնաժողովին քայ-
քայումը պիտի ըլլայ, այլ և անոր համար որ
ցաւած սրտով կը հրաժարի, նեղացած, վըշ-
տացած : Հանրային կեանքէ անբաժան եղող
մեքենայութիւններ, պարկեշտ ու ազնիւ աշ-
խատողները վհատեցունելու ախտը գնաց հա-
սառ մինչեւ այդ խղճամիտ մարդուն ալ որ ա-
ռաջին անգամ ըլլալով կը մտնէր ազգային
գործի մը մէջ և խղճին ու սրտին հետեւելով
կը գործէր : Այս պայմաններուն մէջ, սրջափ
որ կը զօրէ մեր ձայնը, պիտի պահանջենք
որ իր հրաժարականը մերժուի ու գոհացում

տրուի իրեն որպէս զի շարունակէ նորէն այ-
ցելել գաղթականներուն : հոգալ, խնամել
զանոնք իր պաշտօնակիցներով սրոնց հետ
կանգուն մնաց պատնէշին վրայ՝ նեղութեան
ամենէն գծուարին օրերու մէջ իսկ :

Այս կետին վրայ ծանրանալու շարժա-
ռիթը՝ նոյնքան գաղթականներուն օգուտն ու
կարեկցութեան արժանի ըլլալն է, որքան
սկզբունքի մը պաշտպանութիւնը թէ հանրա-
յին գործի մը մէջ իր կարողութեան չափով
և պարկեշտօրէն աշխատողները ձգելու չէ
որ այսպէս կանուխ վհատին ու քաշուին դառ-
նացած սրտով : Շատ գէշ օրինակ մը տրուած
կըլլայ :

Միւս կողմէ, միջազգային Յանձնաժողո-
վին նախագահ Տիգրան փաշայի վերագարձը,
որուն շատ բան կը պարտին գաղթականները,
յուսալ կուտայ մեզի թէ նիւթական տեսա-
կէտով բան մը պիտի խորհուի, միջոցներ ձեռք
պիտի առնուին՝ շարունակելու համար այն
համեստ նպատակը որ կը նուիրուի եկեղեցիի
շրջափակին ապաստանած կարօտեալներուն :
Աւելի քան մէկ տարիէ հետէ գերմանացիներ
հիգելով հանգանակուած դրամն սպառած է,
գիտենք, ու դժուար կերեւայ նորէն հանգա-
նակութեան ձեռնարկելը : Բայց Տիգրան փա-
շայի մարդասիրական զգացումները, որոնց ի-
րական մէկ ապացոյցը վայելեցին Եգիպտոս
ապաստանած հայերն, ու եւրոպական գաղ-
թականութեան բարձր շրջանակներու մէջ ու-
նեցած յարգը հաւաստիք մըն են որ կարելի
է դեռ բան մը ընել, գոնէ այս ձևով ալ
անոր անօգնական չի ձգելու համար մնացող
գաղթականները : Ամեն վստահութիւն ունինք
այս մասին, և մեր կողմէ բան մը առաջար-
կելու պէտք իսկ չենք տեսներ, գիտնալով որ
այդ բարեգործական շարժումը ինքնաբեր պի-
տի ըլլայ՝ ինչպէս եղաւ անցեալ տարի :

ՆԱՄԱԿ ՍՈՒՏԱՆԷՆ

ՏՕՆԿՈՒ, 12 հոկտ.

Խալիֆա Ապտուլլահի Թալիշի, Սուլթանի փի-
մալիոնը, Երկրի թագաւորին նման՝ փարզէ անկող-
նի վրայ չէ այս պահուստ ձգնաժամի արհաւիրքին
մէջ, վճռական ինքնապաշտպանութեան մը կը
պատրաստուի՝ այն ինչ իր զօրագնդեր, համարաւոր
իրենց վաղեմի շահատուկութեամբ, կողմակերպուած
բանակի մը գերազանցապէս անհաւասար ուժէն ա-
հարեկ՝ յետոյ յետոյ քաշուելու վրայ են : Թող ցըն-
ծայ Սլաւոն փաշա, Խալիֆայի նախկին գերին, ա-

զատութեան յոյսը, աւելի բան երբէք, փալկի թող
Օսմուլմանի քրիստոնեայ բանտարկեալներու սրտին
մէջ, և թո՛ղ կօրածն փաշայի և իր բաղդակից զո-
հերու վրէժխնդրական ոգին, տարիներու խոր քնն
զարթնած, խայտայ բերկրալից իրենց բռնաբեր
մին ներքեւ : Մտ է բռնակոտի մ'ալ օրհասը :

«Le bonheur des tyrans comme un tor-
rent s'ecoule»

Այո՛, վերին Նեղոսի միջնորդին վրայ՝ թէ-
պէտ դեռ մշտապատ, նոր հորիզոններ կը պարզուին,
փալկուն ու բարեշնչան, այն պահուստ անդրեգիւղ-
տական բանակը յուշիկ յուշիկ դէպ ի Խարթում կը
յառաջանայ, զգալի պարագա մը թողով ետին այն
ամէն վայրերը ուրիշ անցաւ : Նեղոսի օձապտոյտ
եղերքներէն. հետքերը միայն թողուց իր յաղթա-
նակաց որոնք յետամուտ հերմակի փիլիսոփանե-
րուն յիշեցնել կուտան աշխարհի ունայնութիւնը,
տիրազդեցիկ եղանակաւ մը անապատի մէջ :

Ինչքան կարեւոր անուններ էին արդարեւ անց-
եալ տարի՝ երբ բանակը հոն բաղմած էր, Սարաւ,
Աւգիլօր, Աքաշա, Քաշա, Տիւլի, Քիտտէն, Ապու-
ճաթմա, Ճաֆի, Տոնիլա ևն. ինչ եղան հիմա :
Առաջին երեքներ անապատ տեղեր էին արդէն ու
նոյնը մնացին : Իսկ վերջիններ՝ մէկ մէկ արուար-
ձան՝ ուր տեղային բնակիչը, Պէրպէրի, Սուտանի էն
տիմար և ծոյլ ժողովուրդը, Տէրվիշներու հորըս-
տահարիչ լուծէն սրածած, քաղաքակրթութեան հա-
ւատարարալի բարեբանն է զոր կը վայելէ ուրախ
սրտով, կենաց և ստացուածքի ապահովութիւն,
արդարութիւն և, ցանկալի բան, ազատ շունչ :

Այս ամէն վայրերէն Քէրմա և Մէրափի կարե-
ւորութենէ դուրս չեն գլխաւոր նաւահանգիստներ
ըլլալուն համար, մինչդեռ Վատի Հալիֆա հետեւ-
հետէ բազքի մը կերպարանք կառնու : Վերջին ա-
տեններս, երբ Հալիֆա երթալ հարկ եղաւ ինձ,
տեսայ թէ ինչ խորհրդակցութիւններ եղած են հոն :
Նոր գործարաններ շինուած են որոնց մէջ հայ ար-
հեստաւորներ ալ ունինք, սառույցի մեքենաներ բեր-
ուած են, շատ մը տուններ քանդուած կան ու ճառ-
քաներ անհետացած, Վատի Հալիֆա և Ապու Համէտ
երթալով ուղեւ ուղղակի գծին տեղի տալու համար :

Հալիֆա հասնելու յաջորդ օրն ուղեցի այս դիմն
ալ սցեկել : Երեկոյեան ժամը 6-ն էր. վերջապող
արեւին ճառագայթները այլեւս անազդեցիկ էին ու
հիւսիսային քամին կը փչէր քաղցրասիւք, այն քա-
մին առանց որոյ Սուտան հրոյ ճշմարիտ բով մը սի-
տի անուանէի և որ մեզ՝ ձերմակամորթներու մոռ-
ցընել կուտայ ցերեկուան տօթագին ժամերը : Ու
բաղդաւոր եղայ որ Լոնտոնեան նորիկ թղթակիցներ
ուղեկից ունէի ինձ հետ : Ճամբան՝ թռչելուն մէջ,
այս երանելի ճէնդլմէներ յօգուած մը գրեւո Նիւթ
մատակարարելու հետաքրքրութիւնը ունէին. սրտայոյզ
խորհրդածութիւններ կանգնադառնային երեւակա-
յութեան մէջ : Մեծ ու պզտիկ ազգերու զաւկը-
ներուն մէջ գտած տխուր հակապատկերս էր որ կը
յուզէր զիս անշուշտ : Ե՛հ, ուղեւորութիւնն ալ, որ
յաճախ այնքան դերբնական ներշնչումներ կազդէ
աշխարհի Երեսններուն, ինչե՛ր չտար Հայու զաւ-
կին : Մենէ՛ ո՛ր մէկը քիչ մը կանուխէն ճաշակած
չէ թշուառութեան լեզի բաժակը :

Այս ճամբուն տարածութեան վրայ ամեն տեղ,
բառին նշանակութեամբ, չոր ցամաք անապատ է :

Ներդրողի հետքը բնառ չտեսնելով և թվապես առաջ ապա ճամբով ուղեւորվելը իր դժուարութիւններն ու վտանգները ունէր, չիմացած գիւրութիւններ կան: Մէկ կողմանէ երկաթուղին 24 փամուան մէջ Սպուշուկտ ալտի համար, մինչդեռ Հալիբախ և Քէլմար ճամբով առ նուազ 15 օր պէտք է: Միւս կողմանէ ջրհորներու գիւտը՝ բան մը որ, ըստ անուանի ցեղապետ Սպախի Սպախի, անապատի ճամբորդութեան մէջ յեղաշրջութիւն պիտի բերէ:

(Գարունակեցի)

Ո. Օ.

Ա Յ Փ Մ Ե Ո Ւ Թ Ի Ի Ն

Սեպտեմբեր 14/26, Խաչկերտցի երկու- շաբթիկ, Միտոնի օրհնութիւն կատարուե- ր է ի Ս. Էջմիածին:

Միտոնի օրհնութիւնը մեր Եկեղեցւոյ հիմ- նական ու պատմական սրահայտութիւններէն մէկն է եւ հայ բնակչութեան ժողովուրդին սիրելի քաղաքի կը հանէ իր արքայազնացած ազ- գային-կրօնական յիշատակներով: Այս ան- գամ ալ, քանի որ իր զարթոյնը գաղապէս պակաս քաղաք, ուստի օրհնութիւնը համախմբուե- ր է թիւրքիկէն, Անգլիկէն, Սլաւոնիկէն, Սաւա- յայէն, Պաղմէն, Նոր-Պաղմէն եւ կող- կատեան ուրիշ ֆաղափներէ:

Միտոնի օրհնութիւնը կատարուե- ր է աւանդական փառաւոր հանդիսներով եւ ուս- տարներուն քաղաքացական զգացումները արժանապատեան տեսնել, միեւնոյն տեսնել միա- քանութեան մէջ . . . վեճ ծագե- ր է:

Ահա՛ իրողութիւնը երկու քաղաք:

Վեհափառ Հայրապետը, կանխահոգ կարգադրութեամբ մեր, քաղաքացիական մեր պատմական տաճարէն ելելու վաղիկ հիւսի- սային կողմը, որպէս զի եթէ ուստարներ- րը քաղաքի շրջան, ամենիկ ալ կարեւոր «մարմնաւոր աջակց» վայելէր արարողութիւ- նը: Իսկ Մայր Աթոռի միաքանութիւնը, մաս- նաւորապէս եպիսկոպոսները, Հայաստան- եայց Եկեղեցւոյ աւանդութիւններուն դէմ համարե- ր են այս քաղաք, այն համոզումը յայտնելով թէ Միտոնի միակողմանի մայր սա- ճարի աւագ սեղանի վրայ կարելի է օրհնել:

Մշակ՝ որ կը հաղորդէ այս յորդ, աս- տաճարակներուն եւ կրօնաւորներուն վճռիկ կը քողար թէ այս երկու կարծիքներէն ո՛րն է ճիշդը:

Առանց այդ մասնագիտական հարցին մէջ մտնել փորձելու, որուն ձեռնհասութիւ- նը յունիկ, դիտել պիտի տեսնէ միայն Էջ- միածինի միաքանութեան թէ բնակչութեան զոր ցոյց տալ կողմէն այս պարագա- յին մէջ՝ այնչափ գնահատելի յանգրութիւն մը չէ որչափ պիտի ըլլար իրենց կողմէ տրուե- լի կարգապահութեան եւ հնազանդութեան օրհնակը Եկեղեցւոյ հոգեւոր պետին որուն prestige- սկարագրուելէ որիչ քանի չեն ծառայե- ր այս տեսակ վեճեր: Յետոյ, պիտի հարցունեն Մայր Աթոռի Գերապետներ- րուն. արգիւն այս տեսութեան ու դառնու- րեան օրհնութեան մէջ, Էջմիածինի մէջ ալ վեճ եւ կողմակցութիւն . . . :

Գունե- ր այդ ալեգարդ եպիսկոպոսները քաղաքութիւն կազմեցին:

Ք Ր Օ Ն Ի Կ

Վեհափառ մը՝ Շուրաբեկբորն և երգչուհի մը՝ Իվէթ Կիլիկ, քանի մը օրէն Գալիլիէ պիտի գան: Առ այժմ՝ այս երկուքէն աւելի ուշագրաւ դէմ- քեր չկան այն այցելուներու ցանկին մէջ որոնք ա- րեւի լոգանք մը ընելու պատրուակով՝ Քուքի գոր- ծակալութիւնը, Կէզիբէ Բալաթը և Շէփըրտ Օթէլը կը հարստացնեն նոյեմբերէն մինչեւ մարտ:

Նորին Սիւրբաթական Վեհափառութիւնը գուցէ այնքան հետաքրքրութիւն չի չարժէ Մէհմէտ Սիւրբաթականութիւնը մէջ որքան բարիգետն փառաւորութիւնը: Եւ իսկ իր վրայ խօսեցնել կուտայ ոչ թէ անոր հա- մար որ աշխարհը գեղեցկութիւնը, այտերուն գոյնը կամ իր յոր սրունքներուն ձեւը տարբեր է ուրիշ որեւէ գեղեցկ կնկան մը աշխարհէն, այտերէն և սրունքներէն:

Ամեն երկիր, տիեզերքի վրայ, իր թաղաւորը և կամ գոնէ գոնէ իր իշխանը ունի, հետեւաբար եզակեանքութիւն մը չէ Շուրաբեկբորն. բայց Իվէթ մէկ հատիկ է, Իվէթ անգուգաւորն է (այս բառին քերականական իմաստով):

Իվէթ Կիլիկը նոր գեղարուեստ մը հարեց, հապտոյի գեղեցկագիտութիւնը կամ ուրիշ բառով իզապատեցութիւնը:

Բեմին վրայ թէւեւ կիսամերկ վիճակի մը մէջ կը ներկայանայ, բայց իր գիտաւորութիւնը վարդա- գոյն մանրը յուշումներ չէ, ոչ ալ խօս գաղափարներ տալ ակնաւոր իրեն նայողներուն:

Շուրաբեկ, մետաքսի և տանթէլի խառնուրդի մը մէջ գեղեցկութիւն անուշութիւն մը կուտայ մարմնոյն, բայց ասով կերբերը չէ որ ոտք հանել կուզէ և ոչ գէպի ինքն հրաւիրել վաւաչող սրահի մը ուշագր- րութիւնը:

Չային և ըստածքին մէջ անանի գերմարդկային, անանի դիւթիչ շնչերը կը դնէ որ անոնց հրապոյ- րին առջեւ կը մոռնաս թէ երգչուհին կին մ'է, դիւ- րամտալէիներու դասակարգէն, որ երբ բերանին կը բանան երգելու համար, անպատճառ ուշագրո- րութիւն կընեն . . . սրունքներուն:

Չէ՛, այդ կիններէն չէ Իվէթ Կիլիկը: Անոր ա- մեն մէկ շարժումներն մէջ, ամեն մէկ քայլափոխին մէջ բանաստեղծութիւն կայ. հագուստին և երգած կտորին մէջ կատարեալ ներդաշնակութիւն կը տիրէ, և նայողներն ու յոնքերուն երեւելին մէջ բան մը կայ որ չի քայքայողութիւն, այնքան նուրբ և այնքան անխիթարական է:

Շուրաբեկի կինը չէ այն, այլ երազներու դիւր- հին, իգականին գեղեցկագիտական մարմնացումը, քնարերգութեան շատուածուհին, գաղափարական կինը՝ որուն նմանը պիտի ըլլային ամենքն ալ եթէ Եւայ որիւրեւիտ տղու մը պէս պտուղի մը համար երկնային պատիժը աչք չտանէր:

Այո՛, Իվէթ Կիլիկը, բեմին վրայ կուզէ ներ- կայացնել այնպիսի կին մը որուն նմանը պիտի ըս- տեղծէր Ստուած ամենքն ալ, եթէ բաներորդ գա- րուն մէջ իր գործերը սրբագրելու ելլէր:

Շուրաբեկբորն հպատակողներ ունի իրեն, իսկ Իվէթ՝ պաշտողներ, ինչ որ թաղաւոր ըլլալէ քիչ մը աւելի կարժէ:

Իվէթ Կիլիկը իր մեղրալուսինը կուգայ անյու- նել Ներդրող երգերը և արմաւենիներու շուրթն տակ. մեզի եթէ ոչ լսել՝ գոնէ տեսնել կարելի պիտի ըլ- ցայ Բարիգետի մը կատարելագոյն տիպարը որուն նկարագրութիւնով մեր բերնին ջրերը վազցնելու տան Պուրթէի, Մարկիթի, Քարթիթի պէս գրողներ:

Յուստահատական է սակայն տեսնել թէ այդ ինք- նատիկ ճանճարն ալ, ամեն գեղարուեստի վարպետ- ներուն պէս, իր պատուանդանէն վար իջնելու հա- կին մէջ կը գտնուի, գէ՛մ գնելու համար կենսապայ- քարին Պիզէ, Ռոսինի և տանց պէս քանիներ ա- նթութեան կը մեռնին և Իվէթ, այդ եթերային է- ակը, կամուսնանայ. ինչ տափակ վերջաւորութիւն և ինչ անկում:

Կը հասկնամ որ Քարա Վարո՛ւ տափախնդի- ի խառնուրդն ամուսնանայ, բայց Իվէթ պէտք է Իվէթ մնար, այսինքն ամեն գեղեցկագէտներուն խոյալը, բայց ոչ մէկուն կինը:

Այն օրը որ Իվէթ մայր ըլլայ, ինծի այն պէս պիտի թուի թէ Ռաֆայէլն է որ զգնացած՝ երկաթի կաշտ կտորով մը ծօղարիման կը բերթէ:

Յ. Ա.

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Մեր արտասահմանի բաժանորդներուն կը ծանուցանենք թէ մինչեւ յառաջիկայ Դեկ- տեմբեր 1 իրենց բաժանորդագիրը մեզ չի հասցունողներուն այլ ևս թերթ չի պիտի ղը- րուի:

Կ. ՊՈԼՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն կը հաղորդեն եւրոպական թեր- թերուն, թէ հոկտեմբեր 10ին Բերայի մէջ հայ կաթողիկ վարդապետ մը յարձակում կըր- րէ թուրք զինուորներու կողմէ որոնք ծանրա- պէս վիրաւորե- ր են զայն: Վարդապետը ֆրան- սական հիւանդանոց փոխադրուե- ր է՝ դար- մանուելու համար: Այս դէպքին հետեւանալ- և գետնաներու բուրբիւն վրայ, Իրատէ մը ելեր է հրամայելով որ Թեոսալիայէ վերադար- ձող զինուորները փողոյները չի պտտին:

— Դարձեալ Բերայէն կը հեռագրեն Տէյրի Մէյլին թէ այս միջոցիւ պատերազմէն դար- ձող քանի մը հազար զինուոր կայ Կ. Պոլիս, իրենց տեղերը վերադառնալու սպասելով: Ասոնց ներկայութիւնը մշտնջենական վտանգ մը կը համարուի քրիստոնեաներուն համար: Հոկտեմբեր 13ին Բերայի մէջ զինուոր մը կո- ղուսել է Սամսի երկաթագործ մը, մինչ իր ընկերը ուրիշ անցորդի մը ձեռքէն արժէքա- ւոր գաւազանը կը խլէր: Ոստիկանութիւնը, թէեւ իմացաւ, մերժեց միջամտել:

— Հաշտութեան վերջնական պայմաննե- րուն վրայ բանակցելու պաշտօն ունեցող յոյն և թուրք պատուիրակներն սկսած են իրենց գումարումներն ի Կ. Պոլիս: Համասի հեռա- գիր մը կընէ թէ «յոյն պատուիրակներուն հաշտարար ընթացքը յուսալ կուտայ թէ խըն- դիրն արագ լուծում մը պիտի գտնէ»: Աւե- լլորդ էր շնչտել այս պարագան. հելլէն պատ- ուիրակներն ալ, իրենց կառավարութեան պէս, հաշտարար ու համակերպող պիտի հանդիսա- նային բնականաբար. դժուարութիւնը, եթէ ծագի, հակառակ կողմին մէջ փնտռելու է:

— Կրեմլի կառավարչութեան ընտրելիներ- րուն վրայ նոր անուն մըն ալ կաւելնայ: Չա- րը հրաւիրած ըլլալով Պաթէնպէրկի Փրան- ծօզէֆ իշխանը՝ իրեն տեսութեան երթալ ի Տարմիթատ, Սոսնաւս կը հետեւցունէ թէ իշխանը Կրեմլի կառավարիչ անուանելու տրամադրութիւն մը կայ: Փրան- ծօզէֆ Պուլիարից նախկին իշխանին եղբայրն է:

— Վիեսնաւոսի կը յայտարարէ թէ Ռու- սիա և Փրանսո չի պիտի հաւանին բնաւ որ Կրեմլի կառավարչութիւնը գերմանացիի մը յանձնուի, նոյն իսկ եթէ թուրք բանակին մէջ ծառայող փաշա մը ըլլայ:

— Տէյրի Նիզի թղթակիցը կը հաղորդէ թէ Կ. Պոլսոյ մէջ այժմէն պատրաստութիւն- ներ կը տեսնուին հիւրնկալելու համար Գեր- մանիոյ կայսրը որ յառաջիկայ դարնան Պա- ղեստին ուղեւորելէ առաջ՝ երկրորդ անգամ ըլլալով պիտի այցելէ Վաթիքի ափերը:

— Գերմանիոյ արտաքին գործոց նախարդ- նախարար Պ. Ֆոն Մարշալ Կ. Պոլսոյ գերմանա- կան դեսպան անուանուեցաւ Պ. Սաուրմա Ելե- չի տեղ: Այս ընտրութեամբ՝ Վիլհելմ կայսրը

ցոյց կուտայ թէ ինչ կարեւորութիւն կընծայէ թուրքիոյ մայրաքաղաքին մէջ իր ունեցած դեւսպանութեան :

—Հաւանական կը կարծուի որ Պ. Համիլթըն Լանկ, Եգիպտոսի Տայրա Սանիաին նախորդ ֆոնդօրէտը, որ Թուրքիոյ ծխախոտի Բէթիին հաստատման ժամանակ առաջին տնօրէնն եղաւ, կոչուի յաջորդել Սըր Էտկար Վինսթընֆիլդի իբրեւ ընդհ. տնօրէն Պանք Օթօմանի : Միայն թէ պայմանաւոր պիտի ըլլայ իր պաշտօնավարութիւն, այն է երկու տարուան համար :

—Սըրանտարին Կ. Պոլսոյ թղթակիցը լուր մը կը հաղորդէ որ աւելի մտացածին հանգամանք մը ունի քան իրական : Պուլկարիա դաշնակցութիւն մը առաջարկել է եղբոր թուրքիոյ, սա գլխավոր պայմաններով . 1. Ֆէրտինանտ իշխանը ցմահ կառավարիչ մնայ Արեւելեան Րումէլիի և այդ պաշտօն ժառանգական ըլլայ իր ընտանիքին մէջ . 2. Պուլկարիա ընդունի Սուլթանին կատարեալ դեր իշխանութիւնը . 3. Թուրքիա երաշխաւորէ Պուլկարիոյ անվճար պահպանումը :

Պատերազմ մը ծագած ատեն, Թուրքիա 200,000 զօրք դնէ Պուլկարիոյ տրամադրութեան ներքեւ . այս վերջինն ալ, համանման պարագայի մը մէջ, փոխադարձաբար 100,000 զօրք :

Անգլիական թերթին թղթակիցը կաւելցունէ թէ այս դաշնակցութեան սկզբունքն ընդունուած է արդէն երկու կողմէ : Կը կարծուի սակայն թէ այս սեղեկութիւնը երեւակայական լուրերու կարգը միայն դասուելու արժանի է և ո՛ր և է հիմ չունի :

—Հելլէն կառավարութիւնը ծանուցագիր մը ուղղելով մեծ տէրութեանց դեսպաններուն, յայտարարել է թէ օսմ. իշխանութիւնը արգիլել են երկու յունական նաւերու Իզմիրի նաւահանգիստը մտնելը : Ծանուցագիրը տէրութեանց միջամտութիւնը կը խնդրէ հարկադրելու համար օսմ. իշխանութիւնները որ յարգեն հաշտութեան նախաշաւիղ պայմաններուն գործադրութիւնը՝ ի մասին նաւարկութեան :

—Կրէտէի 1866ի յեղափոխութեան պարագլուխ՝ Տ. Բարթէնիոս Բէլայիտէս քահանան որ երկու անգամ աքսորուած և քսան տարի Խալկիս քնակած է, նախորդ շարժումն իտալական շոգենաւով մը Բիւլէէն Հանես ուղեւորել է, կրէտական գործերու մասին քաղաքական պաշտօն մը կատարելու :

—Հալապի հեռագիր մը կը հաղորդէ թէ Սուլթանը արտօներ է Թեսալիայէն հեռացած զաղթականներուն՝ իրենց սեղերը վերադառնալ :

Միւս կողմէ, ռուսական Սվիէթ լրագիրը կիմանայ Կ. Պոլսէ թէ պէտք չէ սպասել որ թուրքերը Թեսալիայէն հեռանան այս ձմեռ, եղանակը բաւական առաջացած ըլլալով արդէն : Սպարապետի Դուռն հարկ եղած վրաններն ու պիտոյքը զրկել է Վօլօ, Էտհէմ փաշայի զօրաբանակին ձմեռնային բնակութեան համար :

—Աւստրիական դեսպան Պ. Փօն Բալիչէ, որ արձակուրդով մեկնած էր, ամսոյ 14ին Կ. Պոլիս վերադարձել և անցեալ ուրախ Սուլթանին ներկայացել է, Մեծ-Եպարքոսին ու

արտաքին գործոց նախարար Թէվֆիկ փաշայի հետ երկար տեսակցութիւն մը ունենալէ ետք :

—Բարիդի Սօյէյլ լրագիրը սա խորհրդաւորութիւններ կընէ թուրք կառավարութեան այն որոշման առթիւ, որով այլեւս չուզեր ճանչնալ Պէրութի ֆրանսական բժշկական վարժարանին վկայականները . «Ֆրանսա» թողլով որ Թուրքիան Յունաստանը ընկճէ՝ մեծ սխալ մը գործեց : Այդ սխալը պիտի տուժէ արեւելքի մէջ իր ունեցած դիրքը կորսնցունելով : Թուրքիան այլեւս մեզմէ չի վախնար, հետեւապէս չի յարգեր զմեզ : Գերմանիոյ աշակցութեան կրթնած՝ Սուլթանը կը մտածէ թէ այլեւս մեզմէ քաջութեւ պատճառ մը չունի : Անարգանք մըն է զոր թուրքերը կընեն Ֆրանսայի յանձին Պէրութի ժէզուիլմներուն : Այո՛, անարգանք մը, և չա՛տ յատկանշական : Այս ճամբով, դեռ ուրիշ անարգանքներ ալ պիտի կրենք :

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀՅՈՒՄՈՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 22 հոկտ. — Հաշտութեան վերջնական սրբանշանը իրականացութեան նիւտերը այսուհետեւ ամեն օր պիտի գումարուին :

ԱԹԷՆՔ, 22 հոկտ. — Լրագիրները կը յայտարարեն թէ երկուսն ալ քննարկի պայմաններն անընդունելի են Յունաստանի համար :

ԱԶԳԱՅԻՆ

Առաջնորդական Տեղապահ Տ. Յակոբ Մ. վարդապետ Աշոտ հինգշաբթի օրը Գահիրէ վերադարձաւ վերջնապէս, և երէկ նախագահեց Բաղադական Ժողովոյ նիստին :

Առաջնորդարանի դիւանատունէն կը խնդրուի մեզմէ ծանուցանել թէ, որոշմամբ Քաղաքական Ժողովոյ, ազգային տրոյց հաւաքիչ կարգուած է Պ. Գուրգէն Միրիճանեան :

ՏԵՂԱԿԱՆ

Անգլիական նաւատորմը վաղը պիտի մեկնի Ալեքսանդրիոյ նաւահանգիստէն դէպ ի Պէրութ, ուսկից Իզմիր այցելելէ ետք՝ նոյեմբերի վերջը Մալթա պիտի վերադառնայ թէ՛ եգիպտական իշխանութիւնը և թէ՛ անգլիական գաղթականութիւնը փառաւոր ընդունելութիւն ըրին դեր-ժովակալ Հարրիսին ու սպաններուն :

—Լոյտ Գրոմբը, որ Ալեքսանդրիա դաշած էր խտրական կրկին հացկերոյթներուն ներկայ գտնուելու, Գահիրէ վերադարձաւ :

—Նախարարապետ Մուսթաֆա փաշա Ֆէհմի ու նախարարները առաջիկայ երկու շաբթի Ալեքսանդրիա պիտի երթան, Բարձր Խտիվին ծննդեան տարեդարձին առթիւ կատարելի ընդունելութեան ներկայ գտնուելու :

—Անգլիական բանակի նիզակաւորաց 21րդ զօրագունդի այն շուկաւոր որ ամսոյ 7ին Ալեքսանդրիա գնաց «ցուցարարական» պտոյտ մը կատարելու, ճամբայ ելած է դէպ ի Գահիրէ : Ապու Հոմսի մէջ, Պօլոս պէյ Աշդեան նախաճաշ մը տուել է սպաններուն, մասնաւոր սեղան մըն ալ սարքել տալով 90ի մօտ զինուորներուն :

Թէ՛ սպանները և թէ՛ զինուորները՝ Եգիպտական արեւին տակ իրենց ըրած ճամբորդութենէն յոգնած և սլապակած, սուր ախորժակով մը սեղան նստան ուր շամբանեան կը զեղուր :

Ճաշէն յետոյ շուկաւոր հրամանատարը որ արուեստասէր լուսանկարիչ մըն է, Պօլոս պէյի բնակարանը լուսանկարեց ի յիշատակ իրենց գտած սկստիական հիւրասիրութեան :

ԲԱՄՊԱԿ ՔՆԱՐԻՆ ԴԵՍ

Բամպակի վաճառական մը ստորագրութեամբ ստացած ենք ոտանաւորախառն նամակ մը, ուղղեալ առ Տարագիրն իր «Անարեւ Երկինք» բանաստեղծութեան առթիւ որ հրատարակուեցաւ Փարիսի 41րդ թիւով Դաւիթըշլի գրուածքի սիրուն նմոյշ մըն է այս, բոլորովին հակադարձը մեր գիտցած բանաստեղծութեան, որ հրապոյիս զուրկ չի պիտի նկատուի բամպակի այս երկրին մէջ :

Երկինք ու արեւ մի՛ խառնել իրար, Գործող տարագիր, տրտում, սիրահալ, Դառնացած սըրտիդ, հոգեդ վերահար Անոնք չեն կարող դեպ դարձան ըլլալ : Կուզէ՛ս որ երկինք պատի ամպամած, Գուցէ իսկ բաղձաւ անձրեւ օրն ի րուն Ու չն՛ս մտածել . . . բամպակի դաշտայ Որոնց կընայ սաղ վեհաներ տնջուն :

Այստեղ, քնարը տեղի կուտայ արձակին, ու «բողբոջ» կը շարունակուի հասարակ մահկանացուներու լեզուով :

«Գիտէի որ բանաստեղծները եսասէր են, անձնապաշտ են, անսիրտ ու անխորհուրդ են, բայց չէի կրնար երեւակայել բանաստեղծ մը որ Եգիպտոս գար ու հսկածներին մէջ, ճիշդ բամպակի հունձքին ատենը, ամպոտ երկինք ու անձրեւ հայցէր իր սիրային ցաւերուն իրեւ դարման :

«Ասիկայ պարզապէս անխղճութիւն է :

«Չե՞ս դիտել, Պ. «Տարագիր», որ այս միջոցիս ամեն աչք շեղմանքովին վրայ յառած է սրտատրոփ և քանի՜ սիրահարներ կան ու ընդ բամպակի լաւ հունձքի մը կը սպասեն իրենց երազներուն իրականացումը վայելելու համար : Եւ դո՛ւն, վերընձիւղեալ քերթող մոռցուած ժամանակներու, կորսուած սիրոյ մը վրայ կողբաս և կուզես որ երկինք ալ քեզի հե՞տ սղլնայ, իբր թէ տակաւին Արիֆ Հայկազունի և ի քիւր ճայնից քնութեան շփեղի ատեններն ապրէինք» :

Այդ ոտանաւորէն և այս նամակէն կը տեսնուի որ Տարագիրը իր սէրը կուլայ Եգիպտոսի մէջ, և վաճառականը՝ իր բամպակները :

Երկուքն ալ իրաւունք ունին, որովհետեւ եթէ Նեղոսի հովտին մէջէն սիրահարութիւնը և բամպակի վաճառականութիւնը վերցնես, անդին ուրիշ բան չի մնար բայց եթէ . . . Բուրգերը և . . . Անամային :

ՎԻԳՓՈՐԻԱ ԹԱԳՈՒՇԻՆ ԵՒ ՇՐԵԱՆԵՐԸ

Երուսաղէմի հրեայներուն բանոր դասը Կիպրոսի մէջ իրենց յատուկ գաղթականութիւն մը կազմելու հրաման ձեռք անցունելու համար հետեւեալ ազերտագիրը ղրկած են Անգլիոյ Թագուհոյն :

«Կը յուսանք որ ձեր վեհափառութիւնը իր սովորական բարութեամբ պիտի համի ընդունի մեր՝ ստորագրեալներու նման գործող բանտներուն աղերքը : Մանկութենէ ի վեր ընտանեցած ըլլալով աշխատութեան և ժուժկալութեան, և այժմ ամեն նաստակալի թշուառութեան մատնուած ըլլալով, վստահ Չեր Օգոստոսփառ գթարարութեան վրայ, կը համարձակինք ներկայ խոնարհ աղերսագիրս Ձեզ մատուցանել որով համար գթալ մեր վրայ և թոյլ տալ մեզի երկրագործական գաղթականութիւն մը հաստատել Կիպրոսի մէջ :

«Մենք չենք նշանակում որոշ ասիլ թանկ մը տարի առաջ հոն հաստատուեցան Մենք ճանաչողած ենք իրեն յարտաւար, պարտաճանաչ եւ համեստ գործաւորները եւ մեր գաւազներուն հասցը ճարելէ զատ ուրիշ թանկ աչք չունինք»

«Ո՛վ Աստուած ամենակարող, բարեկամեցու զովքն ներշնչէ Անգլիոյ թագուհւոյն, որ մեր աւ զերսին ակունջ դնէ եւ օրատուաւոր աշխատութեան մը հրաւիրելով զմեզ, երջանկութիւն նուիրէ մեզի»

«Ի նշան հնազանդութեան կ'ստորագրենք մենք՝ Ձեր Վեհափառութեան խոնարհ ծառաները՝ թանկ եւ հրեայներս յ'երթաւորէմ»

Այս աղերսագիրը այնքան պարզ եւ սոփաբան միամիտ ոճով մը գրուած է որ հազար մը տեղէն հրեայներ խորամանկութիւն կը հոտի :

ՅԱԿՈԲ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

ՓԱՍՏԱԲԱՆ

Տիար Յ. Ասատուրեան, որ վերջերս արժանացաւ փաստաբանի տիտղոսական եւ խառն դատարաններու առջեւ, իր գրասենեակը հաստատուեց ի Գաւազնի խառն/իւնի թաղին մէջ, Մագլում փառայի ապարանին դիմաց, Սենդ-ձօրն պողոտայի վրայ:

Բաց ի դասական գործերէ, յիշեալ գրասենեակին մէջ Ֆրանսերէն, անգլիերէն, արաբերէն, հայերէն եւ բուրբերէն լեզուներով օրինական եւ ամեն ճեսակ գրութիւններ կը բարգմանուին:

Յանախորդները գոն պիտի մնան աշխատութեան եղանակէն եւ գիներու չափաւորութենէն:

Ձեր խորհրդածութիւն՝ վկայեալ աղբասներուն համար : 2-10

ՐԱՅՅԻԻ ԳՈՐԾԵՐԸ

Դիւրամասշէլի պայմաններով

Ստանձնած ըլլալով Բաքիի երկաթուղիներէն տարածուած լեզուաւորութիւնը, չսպառուած գրքերէն ունիւմ միշտ պատրաստ ծախուելու համար:

Սպառուածներէն՝ հետեւեալ երեք կտորներու տպագրութեանը ձեռնարկուած է Եւրոպայի մէջ ամենաշքեղ կերպով:

ՍԱՄՈՒԷԼ. Ա. Բ. Ե. Գ. հասոր
ԴԱԻԹ ԲԷԿ. Ա. Բ. Ե. Գ. » վերջաբանով
ԿԱՅՆԵՐԻ. Բ. հասորը լիակատար

Իւրաքանչիւր գիրք առանձին կարծէ 5 շիլլինգ 25 դահեկան ողջ: Երեքը միասին 12 շիլլինգ 60 դահ. ողջ. ըստ տեսնելէ վերջ 1 անգղ. սակի:

ԲԱՅՎԱՍ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թէեւ ասկէ առաջ որոշեալ առեն մ'ունենք, (մինչեւ սեպտ. 1) ասկայն եւ հիմա որովհետեւ տը պագրութիւնը միայն յունուարի մէջ կ'աւարտի, ի դիւրութիւն դեռ եւս չը բաժանորդագրուողներու, կը շարունակեմ տարածել բաժանորդութեանը հետեւեալ կերպով:

Ինչպէս յիշեցինք, իւրաքանչիւր բաժանորդութեանը երեք գրքերու համար կարծէ 12 շիլլինգ, 60 դահեկան ողջ:

Այժմ մինչ տարագրութեան լրանալը կոյ երեք ամիս, 12 շաբաթ. հսկա. 1 է սկսեալ, որով իւրաքանչիւր բաժանորդագրուող անձ կը պարտի վճարել շաբաթը 1 շիլլինգ, 5 դր. ողջ:

Անոնք որ աւելի ուշ կը բաժանորդագրուին, պէտք է վճարեն առաջին տարիս որոշեալ թուական (հսկա. 1) է անյաճ օրերու շաբաթավճարը, դարձեալ օրին վերջապետու համար: Իսկ այս պարագայէս դիւրութիւն մ'է որ կընծայեմ միանուագ վճարելու անկարող անձանց համար, որոնք այս կերպով անպատշաճ պիտի ունենան վերջապետման մեծանուն վրայասանին գործերը:

Բաժնի միւս երկերէն ալ շաբաթավճարով կարելի է վճարուիլ փափաքողներուն:

Դիմել ի Գաւազնի

Պապ-էլ-խալգ.—սեղանաւոր տիար Ս. Միրան, եւանի խանութը:

Օտար երկիրներէն՝ հետեւեալ հասցէին

M. Egavian 4-10
(Poste restante) Caire

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի



ՃԵՐՄԱԿԵՂԵՆ ԵՒԱՅԼՆ ԼՈՒԱԼՈՒ ՇԱՄԱՐ
ԳՈՐԾԱԾ ԵՑԵՑ

ԼԵՍՍՈՒՎ ՏԻՆ ԺԵՆԻՆ

Մալմի եւ ժամանակի իմայողութիւն. — Մաքուրութեան կատարելագործութիւն. — Արագութիւն եւ դիւրութիւն. — ձեռնակէ դեմքերու եւ այլոց հակաճեխում:

ԿԱՐԵՒՈՐ. Լեւալ/ի սի Ժեյնին ՁԻ ՄԱՇԵՑՆԵՐ


Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիլոսարեկան սպառում. — Գործածութեան կերպը խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ցերեպայցուցիչ յնգիպսոս

Կ. Վ. ԵԿԱՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Գաւազնի. ՊԱՏԱՐ ՄՈՒՐՈՒՐ 5-24

ԺԱՄԱՑՈՑՑԻ ՊԵՏԳ ՈՒՆԻՓ



Դիմեցէք ՍԷԼՎԱՃԵԱՆԻ նորահաստատ մթերանոցն ի խան խալի փողոց (Ոսկերչաց շուկան) ձեւաճիւր վեհալէի մէջ: Սեւլանեան փաճառատունն որ Պոլսոյ հրապարակի վրայ մեծ համար մը կը փայլէր, որչէն, իր սոյ բանաց ընտրութեամբ որ զընոց անոցքէ ի ամ ամուրթ եւամբ, վերջերս բոլորովին հոս փոխադրուած ըլլալով Եգիպտոսի հասարակութիւնն եւս պիտի կրնայ մեծապէս օգտուլ այս տոկոթէն:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՓ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ ԵՐԹԵԻԵՒՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՆԻՐԵՆ ԱՂԵՑԱՆԳՐՈՑ ԳԻԾ

ԿԱՑԱՐԱՆՔ		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Էքսպրէս		Օմնիպ.		Էքսպրէս		Օմնիպ.	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1 2 3 կարգ	առտ.
Գաւազնի	մեկ.	4 45	—	7 —	—	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —	—	—	—	—	—	—
Պէնհա	»	8 —	—	7 49	—	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35	—	—	—	—	—	—
Թանթա	»	11 28	—	8 30	—	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44	—	—	—	—	—	—
Տամանհուր	»	11 48	6 —	8 34	—	11 15	11 —	6 26	6 11	—	1 54	—	—	—	—	—	—
Աղեքսանդրիա	»	3 10	7 34	9 41	—	12 49	11 58	7 59	7 7	—	3 51	—	—	—	—	—	—
Աղեքսանդրիա	»	6 25	9 15	10 45	—	2 30	—	9 40	8 7	—	5 50	—	—	—	—	—	—

ԱՂԵՑԱՆԳՐՈՑԻ ԳԱՆԻՐԵՆ ԳԻԾ

ԿԱՑԱՐԱՆՔ		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Էքսպրէս		Օմնիպ.		Էքսպրէս		Օմնիպ.	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1 2 3 կարգ	առտ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	—	7 15	—	9 —	—	9 20	2 30	4 15	6 15	11 —	—	—	—	—	—
Տամանհուր	»	—	8 6	8 58	—	10 2	—	12 14	4 13	5 15	8 6	1 9	—	—	—	—	—
Թանթա	»	—	9 12	10 28	—	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56	—	—	—	—	—	—
Պէնհա	»	6 15	9 16	11 20	—	11 5	2 49	6 30	6 14	—	3 6	—	—	—	—	—	—
Գաւազնի	»	7 18	9 59	12 23	—	11 46	4 43	7 33	6 52	—	4 25	—	—	—	—	—	—
Գաւազնի	»	8 30	10 45	1 35	—	12 30	6 25	8 45	7 35	—	5 50	—	—	—	—	—	—

ԳԱՆԻՐԵ-ՍԻԻԷԶ

ՊԵՆԶԱՅԻ ՃԱՄԱՑ

ՍԻԻԷԶ-ԳԱՆԻՐԵ

ԿԱՑԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՑ		ԵՐԵԿՈՑ		ԿԱՑԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՑ		ԵՐԵԿՈՑ	
Գաւազնի	մեկ.	11 40	—	7 —	—	Սիւէլ (բարափ)	մեկ.	9 50	—	—	—
Պէնհա	»	12 28	—	7 48	—	» կոյարուն	»	—	—	3 45	—
Թանթա	»	12 33	—	7 53	—	Իսմաիլիա	»	1 20	—	7 5	—
Ջակազիկ	»	1 34	—	8 54	—	Ջակազիկ	»	3 7	—	8 53	—
Իսմաիլիա	»	1 44	—	9 4	—	»	»	3 17	—	9 3	—
Սիւէլ կոյարուն	»	3 40	—	1 —	—	Պէնհա	»	4 13	—	9 47	—
Տօք (բարափ)	»	—	—	5 —	—	»	»	4 17	—	9 4	—
Տօք (բարափ)	»	6 55	—	—	—	Գաւազնի	»	5 5	—	10 35	—